

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԵԱԿԼԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Տանկահայոց պատրիարքի ընտրութիւնը.

Արարատի նախկին Համարում գետեղուէց այն Հե-
ռազիրը որ աւետում էր, թէ Կ. Պօլսոյ պատրիարքական
աթոռը երկար ժամանակ տեղապահով կառավարուելուց
յետոյ գեկումը. 2-ին ունեցաւ իւր Պատրիարքը յանձին
Տ. Յովհաննէս արքեպիսկոպոս Արշարունու:

Այժմ Արարատի ընթերցողներին տանք ընտրութեան
գործողութեանց այն մանրամասնութիւնները որոնց վախ-
ճանն է եղել Տ. Յ. արքեպիս. Արշարունու ընտրութիւնը:

Դեկտեմբեր 2-ին Ազգ. ժողովը նիստ է դումարել և
92 երեսփոխանների մասնակցութեամբ պատրիարքական
ընտրութիւն կատարելով,

Տ. Յով. արքեպիս. Արշարունին ստացել է 52 քուէ

Տ. Եղիշէ արքեպ. Դուրեան » 36 »

Տ. Սարաճեան արքեպիսկոպոս » 1 »

Հետևաբար քուէների մեծամասնութեամբ Պատրիարք է
յայտարարուել Արշարունի Սրբազանը:

Մինչև ժողովը կարելի չի եղել գուշակել, թէ ո՞վ է
հաւանական ընտրելին, քուէների ցրուած լինելու պատ-
ճառով. որովհետև կուսակցական երեսփոխանները և ձա-
խակողմը որոշած են եղել «առանց ընդունելու որ եւ է
զիջում» իրենց քուէները կենդրոնացնել Դուրեան սրբա-
զանի վրայ, որով Դուրեանի համար 35 քուէ ապահովուել է:
Միւս կողմից կենդրոնն ու չէզոք երեսփոխաններն էլ դեռ
համաձայնութեան եկած չեն եղել: Թէև մեծամասնութիւնը
պաշտպանելիս է եղել Արշարունի սրբազանի թեկնածու-
թիւնը, բայց նիկոմիդիոյ Առաջնորդ Տ. Ստեփաննոս սրբա-
զանի և Տ. Զաւէն եպիսկոպոսների թեկնածութիւնները

պաշտպանողներ նոյնպէս եղել են: Այսպիսով ենթադրուել է, որ ընտրութիւնը պիտի տեղի ունենար համաձայն ձայների յարաբերական չափի: Բայց ամենքի ցանկութիւնն էլ այն է եղել, որ աչքի առաջ ունենալով արեւելեան դաւառների արդի փափուկ վիճակը, իրենց քուէները կենդրոնացնեն մէկի վրայ, որպէսզի ընտրուողը որպէս ամբողջի ցանկութեամբ պաշտօնի հրաւիրուող, այժմ զգայ իւր մէջ, կատարելիք զինումների ժամանակ:

Ժողովն սկսուել է ժամը 3-ին նախագահութեամբ Մանկունի սրբազանի և ատենապետութեամբ Մանուկ էֆ. Աղարեանի: Նախ հաստատուել է Գատը գիւղի երեսփոխան Անտօն էֆ. Թարաղի ընտրութիւնը, յետոյ կարդացուել է Քաղ. ժողովի տեղեկագիրը՝ Համագումարի ցանկից իր կատարած 5 եպիսկոպոսների ընտրութեան մասին և ապա Ատենապետաց Իււանի տեղեկագիրը, որով անսրբազրելի է ընդունուել այդ ընտրութիւնը: Ինչպէս յայտնի է, Քաղաք-ժողովը Համագումարի ցանկից ընտրած է եղել Տ. Տ. Արշարունի, Մանկունի, Սարաջեան, Բարդէն և Սմբատ սրբազաններին, ինչպէս որ գրուեց Արարատի անցեալ համարում:

Սրանից յետոյ Ատենապետի առաջարկութեամբ ընդունուում է 10 բաղ. դադար ընտրական խորհրդակցութեանց համար:

Մկրտիչ էֆ. Մելիքեան առաջարկել է խօսել Թեկնածուների արժանիքների և պակասութեանց մասին, ինչպէս և կարդալ Աղգային սահմանադրութեան այն յօդուածները, որոնք վերաբերում են պատր. ընտրութեանը:

Վարդգէս էֆ. աւելորդ է գտել այդպիսի մի վիճաբանական խօսակցութիւն, նախատեսելով, որ իւրաքանչիւր երեսփոխան արդէն լաւ ուսումնասիրած պիտի լինի իւր Թեկնածուն և համաձայն իւր խղճի ազատ Թելադրութեան քուէ պիտի տայ:

Ժողովն ընդունելով Մկրտիչ էֆ. Մելիքեանի առաջարկութեան երկրորդ մասը, կարդացել է Աղգ. սահմանադրութեան վերեւ ակնարկած յօդուածները և անմիջապէս ընտրութեան անցել:

Քուէարկութիւնից յետոյ, երբ սկսել են կարգաւ քուէները և Արշարունի սրբազանի անունը հասել է 47-րդ քուէին, այսինքն ընտրող երեսփոխաններն $\frac{1}{2}$ -ից 1 աւելին բռն կերպով ծափահարել է ժողովը: Այնուհետև Ատենապետը զոգասանքով մի ճառ է ասել նորընտիր Պատրիարքի մասին և շնորհակալութիւն յայտնել ժողովի կողմից Տեղապահ սրբազանին:

Ժողովի վերջին ստորագրուել է ընտրութեան մագալաքան Բ. Դաան ներկայացնելու համար:

(Բիւզ.)

Կենսագրական տեղեկութիւններ հորինելու

Պատրիարքի մասին.

Նորընտիր Պատրիարք Ամենապատիւ Տ. Յովհաննէս արքեպիս. Արշարունին հայ եկեղեցականութեան վարչական շրջանակի մէջ ծանօթ անձնաւորութիւն է: Նա իւր կեանքի ընթացքում ճանաչուած է որպէս մաքուր և անշահասէր մի եկեղեցական: Այժմ նա 57 տարեկան է, ծնուած Թօփգարու: Նախնական կրթութիւնը Պալատի վարժարանում լրացնելուց յետոյ, մտել է Կալաթա Սէրայի վարժարանը, որի ամենափայլուն շրջանն էր այդ, և զպրանոցի այդ ժամանակուայ սաները ներկայումս Տաճկահայաստանում դիրքի տէր անձնաւորութիւններ են:

Միհրան Մանուկեանի համար (Արշարունի Ս-ի աշխարհական անունը), յիշեալ զպրոցն աւարտելուց յետոյ, բացուած էին պետական ծառայութեանց դռները, ուր ծառայում էր նրա հօրեղբայրը, բայց նա իւր բարոյական պարտքն է համարել իւր ոյժերը հայրենիքի ու ազգի ծառայութեանը նուիրել և ընտրել է ուսուցչական ասպարէզ: Մի անգամ ընդ միշտ համոզուած լինելով, որ ինքը պարտաւոր է իւր ազգին ամեն կերպ օգտակար լինել, և որ այդ պարտքը կատարելու շատ զիւրութիւններ է ներկայացնում հոգեւորական ասպարէզը, Միհրան Մանուկեանը ուսուցչութիւնը թողնելով մտաւ հոգեւորականութեան աս-

պարէզը, վարդապետութիւն ընդունելով հոգելոյս Իզմիր-
լեան Ա.-ից 1878 թ. Եղիշէ Դուբեան և Մատթէոս Արծիւեան
վարդապետների հետ: Ձեռնադրելուց կարճ ժամանակ յե-
տոյ նա Ռօզօստօ գնաց իրրև ուսուցիչ և քարոզիչ: Այնու-
հետև երկար տարիներ որպէս քարոզիչ գնաց Պալատ,
յետոյ նասլը գաբու, Կէռիկ փաշա և այլն. և նոյն միջոց-
ներին վարչութեան անդամ և երեսփոխան եղաւ մինչև
1895 թ., երբ առաջնորդական տեղապահի պատշոնով գնաց
Պրուսա, ուր եպիսկոպոսութեան վկայական ստանալով,
ձեռնադրուեցաւ հոգելոյս Խրիմեան կաթուղիկոսից, իրրև
առաջնորդ Պրուսիոյ:

Բռնակալական ռեժիմի ժամանակ, Արշարունի Ա.-ը
որպէս Պրուսիոյ առաջնորդ կարողացաւ հասկանալ տաճիկ
կուսակալների քաղաքականութիւնը և շնորհիւ իւր բռնած
հմուտ ընթացքի, կարողացաւ պաշտպանել իւր ժողովրդի
շահերը: Երկար ժամանակ նա Պրուսիոյ առաջնորդական
պաշտօն վարեց և յեղափոխութիւնից յետոյ հրաժարուե-
լով անցաւ Պօլիս քարոզչի պաշտօն ստանձնելով Սկիւտարի
ս. Կարապետ եկեղեցում: Այս շրջանում նա կարճ ժա-
մանակով վարեց պատր. տեղապահի պաշտօն և մեծ հրմ-
տութիւն ցոյց տալով, այսօր ազգը նրան արժանի համարեց
Պատրիարքի պաշտօնի:

Այժմ, որ գաւառներից պատրիարքարան հասած հե-
ռագիրները այնքան էլ խաղաղ կացութեան մէջ չեն նկա-
րագրում Տաճկաստանի հայ ազգարնակչութեան վիճակը,
նորընտիր Պատրիարքի դրութիւնը խիստ փափուկ է: «Կոչ-
նակը» նկարագրելով այս դրութիւնը, աւելացնում է «Յոյս
ունինք, որ իր տեղապահութեան ու առաջնորդութեան
օրով ձեռք բերած փորձառութիւնները, ազգի ու եկեղեցու
հանդէպ ունեցած իւր ջերմ վերաբերմունքը պիտի հռչա-
կին նորան որպէս դործունեայ և հեղինակաւոր մի պատ-
րիարք»: Այնուհետև շարունակելով ընթերցանութիւնը
մենք մի շատ ուրախալի երևոյթի ենք հանդիպում: Այդ
այն է, որ յիշեալ թերթը նկատելով մի կարևոր հանգա-
մանք՝ ժողովրդի զանազան խաւերի աջակցութիւնն ու

գործակցութիւնը ազդի որոշ մասի հովիւ և զուխ կոչուածի համար, հրաւեր է կարդում թրքահայ ժողովրդին, որ սամուացած ամեն ինչ իւր քաջալերութիւններով ու խրախուսանքով նեցուկ հանդիսանայ նորընտիր պատրիարքին, և ոչ թէ զանազան բողոքներով, խարդախանքներով ու վայր ի վերոյ քննադատութեամբ, անձնական խնդիրներ հրապարակ բերելով ջլատէ նրա ոյժերը: Ողջունում ենք Տաճկահայ լրագրի այդ քայլը, քանի որ այդ է պահանջում մեր հասարակական շահի առողջ զիտակցութիւնը:

Նորընտիր Պատրիարքի հաստատութիւնը.

Դեկտեմբեր 7-ի խառն ժողովի մէջ ղեկուցուել է, թէ նորընտիր Պատրիարք Տ. Յովհաննէս Արշարունի եպիսկոպոսը արդէն վաւերացուած է իւր պաշտօնի մէջ ուստի և ժողովը որոշել է, հէնց այդ շարթուն էլ կատարել ուխտի արարողութիւնը, որ նորընտիր պատրիարքը ձեռնարկէ իւր պաշտօնին: Մայր Դիւանի կարգադրութեամբ ղեկու. 9-ին մայր եկեղեցի զնալու համար մի շարք երեսփոխանների արդէն հրաւեր է ուղարկուած: Խառն ժողովի կողմից Տ. Աբմբատ վարդապետ, և Տ. Սրբահամ քհնյ. ինչպէս և տեւնապետ Ասլանեան և Գ. Կույումճեան էֆէնտիները շնորհաւորելու են զնացել նորընտիր պատրիարքին, որը յայտնել է, թէ ինքը այսուհետեւ որպէս ժողովի նախագահ պէտք ունի ժողովականների աջակցութեան ու ջերմ գործակցութեան:

Արարատի Դեկտ. Ռում լուր առնելով «Բիւզանդիոնից» զրուեց, որ հայ զպիրները Տաճկաստանի զինուորական նախարարութեան որոշմամբ չեն ազատուում զինուորական ծառայութիւնից: Այդ առթիւ «Կոչնակի» ղեկու. Ռում այժմ կարդում ենք, որ Կ. Պօլսոյ պատրիարքարանների միջազգային յանձնաժողովը իւր ղեկու. 6-ի նիստում, որին Հայոց պատրիարքարանի կողմից մասնակցել են պ. պ. Տա-

դաւարեան և ֆէրհատ որոշել է նորից քննութեան առնել կառավարութեան կարգադրութիւնը և կրկին արուելիք զիմումը որոշել: Այս մասին «Կոչնակի» նոյն №-ում լուր կայ, որ Տաճկաստանի դատական նախարարութիւնը Յունաց պատրիարքարանին հաղորդել է պատերազմական նախարարութեան զեկուցումը, թէ պատրիարքարանն այլ ևս չպէտք է զբաղուի զինուորագրութեան խնդիրներով: Նախարարութեան այս վերաբերմունքը դէմ է սահմանադրութեան ոգուն:

Կ. Պօլսի Հայոց պատրիարքարանի կարգադրութիւնը Բուլղարահայոց վերաբերմամբ

„БЪЛГЪ“-ի № 4-ի մէջ կարդում ենք, որ Կ. Պօլսոյ Հ. պատրիարքարանի խնդրանք Բուլղարաց էկզարխը թոյլ է տուել Բուլղարահայ այն համայնքներին, որոնք չունին եկեղեցիներ, իրենց ծիսակատարութիւններն ու օրէնքները Բուլղարաց եկեղեցիներում կատարել: Սա մի տխուր լուր է, որի իրողութիւն լինելը չենք ուզում հաւատալ: Ի՞նչ է նշանակում զիմել Բուլղար պրաւօսլաւ էկզարխին և խնդրել, որ թոյլ տրուի հայերին Բուլղարաց եկեղեցիներում Հայկական ծէսեր կատարել. միթէ ուրիշ ելք հնաւոր չի եղել. միթէ կարելի չէր այդ կարիքը բաւարարել մի այլ ճանապարհով: Եւ փոխանակ այլ միջոց գտնելու, փոխանակ խրախուսելու, քաջալերելու Բուլղարահայ գաղութի մէջ այն սէրն ու հաւատը, որ նա կտրուած բուն հայրենիքից, տաճում է դէպի իւր ազգային եկեղեցին, այսօր Ազգ. պատրիարքարանը զիմել է մի քայլի, որով նպաստում է իւր հօտի մէջ եղած ցանկալի ու անհրաժեշտ հոգեկան կողմերի սառչելուն: Փոխանակ նպաստելու, որ չեղած տեղերում եկեղեցիներ հիմնուեն, որպէսզի առանց այն էլ օտարացող հայ գաղթականութիւնը միանգամայն չխորթանայ իւր ազգութիւնից, այսօր վերջինիս առաջ Ազգ. պատրիարքարանը բանալ է տալիս Բուլղարական պրաւօսլաւ եկեղեցու դռները: Յի-

շեցէք ազգային այն աւանդութիւնը, որ պատմում է, թէ ինչպէս անպարտելի և զօրեղ էր զգում իրեն Արշակ Թագաւորը Պարսից Նապուհ Թագաւորի արքունիքում և որ Կանգնում էր Հայաստանից բերուած և զորքի տակ փռած հայրենի հողի վրայ և ինչպէս թոյլ ու մեղկ զգում իրեն այդ հողից հեռանալիս: Որքան էլ որ սա աւանդութիւն է, բայց և այնպէս ունի իւր խորը հոգեբանական անհերքելի ճշմարտութիւնները: Մենք չենք կարծում, որ վերը յիշուած մանրամասնութիւնները Ազգ. պատրիարքարանի կողմից նկատուած չլինին:

ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Ինչպէս յայտնի է, Կաթոլիկ Հայոց Կ. Պօլսոյ պատրիարք Թերզեանի մի անխորհուրդ ընթացի պատճառով Պօլսոյ երկու պատրիարքարանների մէջ յարաբերութիւնները վերջին ժամանակներս խզուած էին: Բայց որովհետև Թերզեան պատրիարքի բռնած ընթացքը չէր համապատասխանում հայ Կաթոլիկաց վարչական խորհրդի աշխարհական անդամների ցանկութեանը, ուստի վերջիններս տրամադրութիւն ունէին իրենց համերաշխութիւնը գործնականապէս արտայայտել: Այսպիսով Արշարունի սրբազանի ընտրութիւնը մի յարմարագոյն առիթ է հանդիսանում խզուած յարաբերութիւնները վերսկսելու համար, ուստի և հայ Կաթ. վարչական խորհուրդը վերջերքս զումարած իւր մի նիստում ընտրում է մի պատգամաւորութիւն նորընտիր Պատրիարքին շնորհաւորելու իւր ստանձնած պաշտօնը:

(Բիւզ.)